# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdimunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ Ու Մ

07 փետրվարի 2025 թվականի N 281-Ա

## ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 27.12.2024 Թ. N 1933-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հիմք ընդունելով «ՏՍ-ՌԻԵԼԹԻ» ՍՊ ընկերության կողմից 29/01/2025թ. տրված մասնագիտական եզրակացությունը՝

***որոշում եմ.***

Ալավերդի համայնքի ղեկավարի 27.12.2024 թ. «ԱՎԵՏԻՔ ԱՐՇԱԿԻ ԵՍՅԱՆԻՆ, ԱԼՎԱՐԴ ՊԱՏՎԱԿԱՆԻ ՋԱՆԻՆՅԱՆԻՆ, ԱՐՇԱԿ ԱՎԵՏԻՔԻ ՕՍՅԱՆԻՆ, ԱՐՄԻՆԵ ՋՎԵՏԻՔԻ ՕՍՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊՋՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՆԵՐԸ ՈՒ ԿԱՏԱՐՎԱԾ ՁԵՎԱՓՈԽՈՒԹՅԴՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 1933–Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1.1 Որոշման 1-ին կետում «1 հատ պատուհանի» թվի և բառերի տոխարեն կարդալ «6 հատ պատուհանի» թիվը և բառերը:

1.2 Որոշման 4-րդ կետում «վճարը» բառից հետո լրացնել «ինչպես նաև բնակելի տան մեջ ինքնակամ կատարված ձևափոխության՝ 5 հատ պատուհանի համար սահմանված 3155 (երեք հազար հարյուր հիսունհինգ) դրամ արժեքով վճարը» արտահայտությունը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՂՈՒՄԱՇՅԱՆ